



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թի 31037
Դեկտեմբեր 7, 1989

Հոգեշնորհ
Տ. Հայկազուն Վրդ. Մելգոնեան
Հովիւ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Չեղթընհամ.

Միտելի Հայր Հայկազուն,

Այսու գիրով կը յայտնենք որ համայնքիդ պատգամաւորներուն պաշտօնավարութեան շրջանը լրացած է, եւ պէտք է ընտրութիւն կատարէք նոր պատգամաւորներու եւ անձնափոխանորդներու համար, Թեմական Կանոնադրութեան 14-Գ եւ 54 յօդուածներու համաձայն, եւ 1988 տարուան համայնքիդ տեղեկագրին մէջ արձանագրուած տրաստու անդամներու թիւին հիման վրայ:

Կը յանձնարարենք որ ծովսիդ նորընտիր պատգամաւորներուն անունները եւ հասցէները Առաջնորդարան ղրկէք ամենէն ուշը մինչեւ Փետրուար 17, 1990 որպէս զի կարելի ըլլայ հրատարակել զանոնք 88-րդ Տարեկան Թեմական Պատգամաւորական Ժողովին, որ տեղի պիտի ունենայ Մայիս 3-5, 1990, Հինգշաբթի, Ուրբաթ եւ Ծաբաթ օրերը՝ հիւրընկալութեամբ Ուստըր Մասսաչուսեցի Ս. Փրկիչ Եկեղեցւոյ:

Կը թելադրենք որ նորընտիր իւրաքանչիւր պատգամաւորի ինքնութիւնը հաստատող վկայագիրը Հոգեւոր Հովիւին, Ծխական Խորհուրդի աստեճապետին եւ աստեճապիրին կողմէ ստորագրուած՝ Առաջնորդարան ղրկէք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրներուն հետ:

Կը ներփակենք Առաջնորդարան ղրկուելիք վկայագիրին Հայերէն եւ Անգլերէն լեզուներով օրինակը՝ որպէս նմուշ:

Միտելի ողջունի

ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Վկայագրի ևմուշ

Թուական -----

Այսու գիրով կը հաստատենք որ Տիար կամ Տիկին -----
հաւատաւոր անդամ է մեր Եկեղեցոյ եւ ----- ին
գումարուած Տարեկան Անդամական Ժողովի ընթացքին ընտրուած է թեմական պատգա-
մաւոր:

Ծխական Խորհուրդի
Ատենադպիր

Ծխական Խորհուրդի
Ատենապետ

Հոգեւոր Հովիտ

Sample Certificate

Date _____

This is to certify that _____ is a member in good
standing of the _____ Armenian Church; and was duly
elected a Diocesan Delegate by the General Assembly on _____.

Parish Council Secretary

Parish Council Chairman

Parish Priest